

Սեւամորթը կանգ առաւ, ծոցէն հանեց գիրք մը, բացաւ 166 եւ 167րդ էջերը, ցոյց տուաւ հատուած մը ու ըսաւ.

-Կարդացէ՛ք:

Ահաւասիկ կարդացածիս թարգմանութիւնը.

«Յմուտ Չինացի մը, որ դաւանափոխ եղած է՝ ընդունելով քրիստոնեութիւնը, կ'երթայ Միացեալ Նահանգները՝ ուսումնասիրելու բողոքական աղանդները: Կը քննէ նաեւ կաթոլիկութիւնը: Իբրեւ եզրակացութիւն՝ կը յայտարարէ. «Կաթոլիկները կ'ատեն բողոքականները, ու բողոքականները նոյնութեամբ կը փոխադարձեն: Ո՞ր է սիրոյ վարդապետութիւնը»: Վերջապէս, տեսնելով քրիստոնէայ ժողովուրդներուն ընթացքը, այս անկեղծ ու պարկեշտ Չինացին կը նախընտրէ անհաւատ դառնալ՝ ըսելով. «Անհաւատները աւելի անմեղ են»: Ու կը վկայէ, որ անհաւատ չինական կայսրութեան մէջ մէկ տարուան ընթացքին այնքան ոճիր չի գործուիր, որքան Շիբակոյի կամ Նիւ Եօրթի նահանգին մէջ: Ոճրային վիճակագրութիւնները կը հաստատեն Չինացին խօսքը»:

Գրքին անունն էր «Նոր Աշխարհ, Աւետիս Մարդկութեան», հեղինակ՝ Ֆրէյթակ:

Սեւամորթը ըսաւ.

-Քաղաքակրթուած երկրի մը մէջ տարեկան սպանութեանց գումարը հազարապատիկ աւելի է վայրենի երկրի մը մէջ կատարուած սպանութեանց համրանքէն:

Այս «վայրենի»ն լախտի հարուածներ կ'իջեցնէր գլխիս: Չէի գիտեր, թէ ինչ պատասխանեմ: Յանկարծ լրագրավաճառ պատանի մը տեսայ:

Ըսի.

-Մենք մամուլ ունինք: Անհամար լրագիրներ...

Ըսաւ.

-Ի՞նչի կը ծառայեն լրագիրները:

Լուրեր հաղորդելու:

-Ի՞նչ են ձեր «լուր» կոչածները: Թշուառութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, ոճրագործութիւններ, խաբէբայութիւններ, սուտեր, անձնասպանութիւններ, վախեր, սպառազինութիւններ, հիւան-